ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 սեպտեմբերի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

114
(3323)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՐ ԵՐԿՐՈՒՄ Է ՑԱՆԿԱՆՈՒՄ «ՏԵՂԱՎՈՐԵԼ»

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնից անակնկալ ազատված Արմեն Գրիգորյանի համար Նիկոլ Փաշինյանը շարունակում է նոր աշխատանք փնտրել: Ընդ որում՝ խոսքը, մեր աղբյուրների փոխանցմամբ, շարքային պաշտոնի մասին չէ. վարչապետը ցանկանում է Գրիգորյանին նշանակել բավական բարձր կարգավիճակ ունեցող պաշտոնում:

Ինչպես արդեն գրել էինք, Արմեն Գրիգորյանի՝ ԱԽ քարտուղարի պաշտոնից ազատումից հետո Նիկոլ Փաշինյանը նրան առաջարկել էր մնալ կառավարությունում՝ վարչապետի խորհրդականի կարգավիճակով: Մեր տեղեկություններով, սակայն, Գրիգորյանը հրաժարվել է այդ առաջարկից՝ չցանկանալով շարունակել աշխատանքը կառավարության ներսում:

Դրանից հետո, ըստ մեր աղբյուրների, Փաշինյանը Գրիգորյանին առաջարկել է մեկնել Ռուսաստանի Դաշնություն եւ զբաղեցնել Հայաստանի դեսպանի պաշտոնը: Սակայն այս առաջարկը եւս մերժվել է:

Ու հիմա, կարծես, վարչապետը նոր տարբերակ է փնտրում:

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրների փոխանցմամբ՝ Նիկոլ Փաշինյանը քննարկում է Արմեն Գրիգորյանին եվրոպական որեւէ երկրում բարձր պաշտոնում գործուղելու տարբերակը: Խոսքը, մեր աղբյուրների բնորոշմամբ, այնպիսի եվրոպական երկրի մասին է, որը Հայաստանի համար ունի առանձնահատուկ նշանակություն եւ միջազգային գործընթացներում էական դերակատարում:

Ավելին՝ մեր աղբյուրների փոխանցմամբ՝ այս տարբերակը, ի տարբերություն նախորդ առաջարկների, կարծես թե հենց Արմեն Գրիգորյանի սրտով է: Այսինքն՝ Փաշինյանը փորձում է գտնել այնպիսի երկիր՝ դեսպանի կարգավիճակում, որը Գրիգորյանը չի մերժի: Թե կոնկրետ որ երկրի մասին է խոսքը, այս պահին դեռ հստակ չէ: Մեր տեղեկություններով՝ այդ հարցում վերջնական որոշում չկա, եւ Նիկոլ Փաշինյանը շարունակում է տարբերակներ դիտարկել:

Ուշագրավ է, որ Գրիգորյանի պաշտոնանկությունը տեղի ունեցավ նրա՝ ԱԽ քարտուղարի պաշտոնում երկար տարիներ աշխատելուց հետո: Նա այդ պաշտոնը զբաղեցրել էր դեռ 2018 թվականի մայիսից՝ կարճ ժամանակով 2021-ին տեղափոխվելով ԱԳ նախարարի առաջին տեղակալի պաշտոն, ապա վերադառնալով ԱԽ քարտուղարի պաշտոնին:

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել համայնքների ղեկավարների գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի վերաբերյալ հայտարարագրերը եւ դրանք ներկայացնել հանրությանը: Այս անգամ «Ժողովուրդ» օրաթերթի ուշադրության կենտրոնում է հայտնվել Սիսիանի համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանը, որը պաշտոնը ստանձնել է 2024 թվականի հոկտեմբերի 27-ին: Հայտարարագրի համաձայն՝ 2025 թվականի սկզբին Առաքելյանի անունով առկա է եղել երեք անշարժ գույք՝ Սյունիքի մարզի Սիսիան համայնքում բնակարան՝ բաժնային սեփականությամբ, Երեւան քաղաքի Ավան վարչական շրջանում համատեղ սեփականությամբ բնակարան, ինչպես նաեւ Սիսիանում գտնվող հողամաս, որը նրա միանձնյա սեփականությունն է: Նշված գույքերը տարվա ընթացքում չեն փոփոխվել, իսկ նոր անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման վերաբերյալ տվյալներ հայտարարագրում չկան: Տրանսպորտային միջոցների մասով 2025 թվականի սկզբին համայնքի ղեկավարն ունեցել է երեք ավտոմեքենա՝ 2020 թվականի արտադրության Nissan, 2005 թվականի Opel եւ 1999 թվականի Mercedes-Benz: Սակայն տարվա ընթացքում Opel-ը վաճառվել է: Հայտարարագրում նշված է, որ 2005 թվականի Opel-ը դեկտեմբերի 26-ին վաճառվել է 3 մլն դրամով: Տարվա վերջին նրա անունով մնացել են Nissan-ն ու Mercedes-Benz-ը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ArmLur.am-ը երեկ հայտնել էր, որ կաշառքի գործի շրջանակում ձերբակալվել է Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետը: ArmLur.am-ի տեղեկություններով՝ խոսքը Կարեն Ջազյանի մասին է: Հակակոռուպցիոն կոմիտեն պաշտոնապես հաստատել է՝ կաշառք տալու եւ ստանալու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել են Գեղարքունիքի մարզի մի շարք դպրոցների տնօրեններ, ինչպես նաեւ մարզպետի աշխատակազմի համապատասխան վարչության պետը: Ըստ իրավապահների՝ վարչության պետը կասկածվում է մի խումբ անձանց, այդ թվում՝ դպրոցների տնօրենների օգտին հովանավորչության եւ թողտվության դիմաց մի քանի դրվագով կաշառք ստանալու մեջ: Ուշագրավ է, որ Կարեն Ջազյանը մարզպետարանի համակարգում պատահական կամ նոր հայտնված պաշտոնյա չէ: Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքի տվյալներով՝ նա կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի պաշտոնում նշանակվել է դեռեւս 2018 թվականի մարտի 30-ին եւ այդ պաշտոնը զբաղեցնում է ավելի քան ութ տարի: Վերջերս նրան կարելի էր տեսնել «Գելենվագեն» վարելիս:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Հայաստանի իշխանությունների՝ մինչեւ 2029 թվականը Եվրամիության հետ առանց վիզայի ռեժիմի հասնելու հայտարարությունների ֆոնին Բրյուսելից հնչել է ուշագրավ պարզաբանում. Եվրահանձնաժողովը 2029 թվականը որպես վիզաների ազատականացման վերջնաժամկետ չի հաստատում: Սեպտեմբերի 7-ին Բրյուսելում Եվրահանձնաժողովի ամենօրյա ճեպազրույցի ժամանակ լրագրողը ուղիղ հարցրել է՝ իրատեսական է արդյոք, որ մինչեւ 2029 թվականը Հայաստանի քաղաքացիները կարողանան առանց վիզայի մեկնել եվրոպական երկրներ, եւ կարելի՞ է 2029-ը դիտարկել որպես թիրախային ժամկետ: Եվրահանձնաժողովի գլխավոր խոսնակ Պաուլա Պինյոյի պատասխանը հստակ էր. «Վիզաների ազատականացումը ե՞րբ տեղի կունենա: Դեռ վաղ է դա ասել»: Պինյոն հավելել է, որ Եվրամիությունը ցանկանում է խորացնել Հայաստանի հետ համագործակցությունը եւ այժմ Երեւանի հետ քննարկում է մի շարք ուղղություններ: Ըստ նրա՝ երբ այդ ուղղություններով գործընթացները հասունանան, հնարավոր կլինի անցնել Հայաստանի հետ մերձեցման եւ համագործակցության «հաջորդ փուլին»:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՐ ՀԱՄՈԶՄԱՄԲ՝ ԱՅՍ ԳՈՐԾԸ ՇԻՆԾՈՒ Է»

ArmLur.am-ը զրուցել է Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սարգիս Տեր-Եսայանի հետ:

- Պարոն Տեր-Եսայան, ի՞նչ ակնկալիքներ եւ սպասումներ ունեք Անդրանիկ Թեւանյանի եւ Արեգնազ Մանուկյանի գործով դատական նիստից:

- Մենք պահանջել ենք, որպեսզի դատական նիստը լինի բաց եւ դռնբաց, որպեսզի հանրությունը հնարավորություն ունենա հետեւելու ամբողջ գործընթացին եւ տեսնելու գործի իրական հանգամանքները: Մեր համոզմամբ՝ այս գործը շինծու է, իսկ մեղադրանքի հիմքում դրված 622 միլիոն դրամի վերաբերյալ պնդումները պատշաճ կերպով ապացուցված չեն: Մենք ցանկանում ենք, որ այս գործընթացը լինի առավելագույնս հրապարակային եւ թափանցիկ: Հատկապես նախընտրական քարոզարշավի ընթացքում պարոն Թեւանյանի նկատմամբ հնչեցվել են ծանր մեղադրանքներ, եւ այժմ մենք պահանջում ենք, որպեսզի դատարանում հանրությունը հնարավորություն ունենա տեսնելու՝ կան արդյոք այդ մեղադրանքների համար բավարար փաստական հիմքեր: Մեր պահանջը հստակ է՝ եթե մեղադրանքը հիմնավորված չէ, ապա պարոն Անդրանիկ Թեւանյանը եւ Արեգնազ Մանուկյանը պետք է շուտափույթ ազատ արձակվեն: Մենք պահանջում ենք ոչ թե պարզապես կալանքի միջոցի փոփոխություն, այլ այնպիսի որոշում, որը կհամապատասխանի գործի իրական հանգամանքներին:

-Այսինքն՝ առաջնահերթ կարեւորում եք դատավարության հրապարակայնությունը:

- Այո՛: Բաց նիստը կարեւոր է, որպեսզի հանրությունը սեփական աչքերով տեսնի՝ ինչ ապացույցներ են ներկայացվում, ինչ հիմքեր ունի մեղադրանքը եւ որքանով են դրանք հիմնավոր: Մենք վստահ ենք, որ հանրային դատաքննության պայմաններում շատ հարցերի պատասխաններ ավելի հստակ կդառնան:

-.Անցնենք մեկ այլ կարեւոր թեմայի: Երեւանում վերջին շրջանում խցանումների խնդիրը կրկին ակտիվ քննարկվում է: Քաղաքապետարանի ավագանու նիստում տարբեր առաջարկներ են հնչել: Մասնավորապես, քննարկվել է նաեւ մարզային տրանսպորտի մուտքը Երեւան սահմանափակելու գաղափարը: Հավանական եւ արդյունավետ համարո՞ւմ եք նման լուծումը:

- Գիտե՞ք, իշխանությունները տարբեր քայլերով փորձում են արդարացնել իրենց գործողությունները: Օրինակ՝ կարմիր գծերի վճարները թանկացվեցին՝ պատճառաբանությամբ, թե դա պետք է նպաստի խցանումների նվազեցմանը: Բայց մենք տեսանք, որ խցանումները չվերացան: Ընդհակառակը, Երեւանում երթեւեկության խնդիրները շարունակում են մնալ: Մենք «Հայաստան» կուսակցության կողմից նաեւ դիմել ենք դատարան կարմիր գծերի հետ կապված որոշումների հարցով, քանի որ այդ վճարների թանկացման եւ խցանումների վերացման միջեւ որեւէ հիմնավոր կապ չենք տեսնում:

- Իսկ մարզային տրանսպորտի մուտքը Երեւան սահմանափակելու առաջարկը կարո՞ղ է որոշակի արդյունք տալ:

-Որոշակի, սահմանափակ ազդեցություն, իհարկե, կարող է ունենալ: Եթե մարզային որոշ երթուղիներ չմտնեն քաղաքի կենտրոնական հատվածներ, այլ ուղեւորներին տեղափոխեն համապատասխան հանգույցներ, որտեղից նրանք կարող են շարունակել ճանապարհը քաղաքային տրանսպորտով, հնարավոր է՝ որոշ չափով նվազի մեքենաների եւ տրանսպորտային միջոցների հոսքը:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ՝ ՀՅՈՒՍԻՍԻՑ ՀԱՐԱՎ

Ադրբեջանը եւ Հայաստանը պայմանավորվել են պետական սահմանի սահմանազատման աշխատանքներն իրականացնել հյուսիսից հարավ: Այս մասին լրագրողներին հայտարարել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը, հաղորդում են ադրբեջանական ԶԼՄ-ները:

Նրա խոսքով՝ Ադրբեջանը եւ Հայաստանը ձեռք են բերել պայմանավորվածություն այն մասին, որ պետական սահմանի սահմանազատման գործընթացն իրականացվելու է հյուսիսից հարավ՝ սկսած Ադրբեջանի, Հայաստանի եւ Վրաստանի սահմանների հատման կետից:

Նախարարը նշել է, որ ադրբեջանական կողմից սահմանազատման պետական հանձնաժողովը գլխավորում է փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւը:

«Ադրբեջանական կողմից սահմանազատման պետական հանձնաժողովի կազմը մնում է անփոփոխ: Հանձնաժողովը գլխավորում է փոխվարչապետ պարոն Շահին Մուստաֆաեւը: Պարբերաբար անցկացվում են հանձնաժողովների հանդիպումներ եւ քննարկումներ: Հայաստանում համապատասխան հանձնաժողովը նույնպես գլխավորում է փոխվարչապետը»,- նշել է Ջեյհուն Բայրամովը:

Նրա խոսքով՝ անցած ժամանակահատվածում երկու երկրների հանձնաժողովների միջեւ տեղի են ունեցել բազմաթիվ հանդիպումներ, իսկ հանձնաժողովների գործունեությունը կարգավորող մի շարք փաստաթղթեր ընդունվել եւ հաստատվել են ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Հայաստանում: «Առկա է պայմանավորվածություն այն մասին, թե որ ուղղությունից պետք է սկսվի եւ հետագայում առաջ ընթանա մեր ընդհանուր սահմանի սահմանազատման գործընթացը: Կա համաձայնություն եւ փոխըմբռնում առ այն, որ աշխատանքները կսկսվեն սահմանի առավել բարդ՝ հյուսիսային հատվածից՝ Ադրբեջանի, Հայաստանի եւ Վրաստանի սահմանների հատման կետից, եւ առաջ կգնան հյուսիսից հարավ»,- հայտարարել է նախարարը:

Ջեյհուն Բայրամովը ընդգծել է, որ առավել կոնկրետ հարցեր կքննարկվեն սահմանազատման հանձնաժողովների աշխատանքի ընթացքում, եւ ակնկալվում է դրանց լուծումը. «Ինչ վերաբերում է առավել կոնկրետ մանրամասներին, ապա, բնականաբար, բոլոր հարցերը կքննարկվեն ըստ անհրաժեշտության եւ համապատասխան ժամանակին, եւ ակնկալվում է, որ դրանք նույնպես կլուծվեն: Այս կամ այն բնակավայրերի հետ կապված հարցերը կքննարկվեն սահմանազատման հանձնաժողովի աշխատանքի շրջանակներում»:

ԿԳՈՐԾՈՒՂՎԻ ԻՐԱՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդուարդ Հակոբյանը սեպտեմբերի 12-ին կգործուղվի Իրանի Իսլամական Հանրապետություն: Ըստ վարչապետի N 892-Ա որոշման՝Հակոբյանը Իրանում՝ Նորդուզ սահմանային անցակետում եւ Ջուլֆա քաղաքում, կմասնակցի երկկողմ սահմանային հանդիպման: Գործուղման հետ կապված ծախսերը կկատարվեն ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով Պետական եկամուտների կոմիտեին հատկացված միջոցների հաշվին: Որոշմամբ սահմանվում է նաեւ, որ Էդուարդ Հակոբյանը գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում պետք է ներկայացնի Իրանի Իսլամական Հանրապետություն գործուղման արդյունքների մասին հաշվետվություն:

Ս. Գ.

ԹՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՇԱՏ ՉՄՏԱՀՈԳՎԻ

Թող Ադրբեջանը Հայկական ԱԷԿ-ի վիճակով Հայաստանից շատ չմտահոգվի: Հայտարարել է ԱԷԿ-ի գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանը՝ ապագա փակման վերաբերյալ Ալիեւի հայտարարությանը, հայտնում է Սպուտնիկ Արմենիան: Կայանի ղեկավարը լրագրողներին ասել է, որ աշխարհում չկա որեւէ ատոմակայան, որտեղ 153 օրվա ընթացքում իրականացված լիներին արդիականացման 20 խոշոր միջոցառում: Մարտիրոսյանը վերջերս այցելել է եվրոպական երկրներից մեկի ատոմակայան, որտեղ նրան հայտնել են, որ նույն ծավալի աշխատանքների իրականացման համար իրենցից կպահանջվեր 6 տարի: Նա համոզված է, որ իրականացված աշխատանքը բարձր գնահատականի կարժանանա ԱԷՄԳ-ի ներկայացուցիչների հերթական այցելությունների ընթացքում:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանը սեպտեմբերի 9-ին ընդունել է ՀՀ-ում Բրազիլի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆաբիո Վազ Պիտալուգային, որն ավարտում է իր դիվանագիտական առաքելությունը Հայաստանում: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ Ազգային ժողովի տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ Ռուբեն Ռուբինյանը շնորհակալություն է հայտնել դեսպանին Հայաստանում իր դիվանագիտական առաքելության ընթացքում կատարած աշխատանքի եւ Հայաստան-Բրազիլ հարաբերությունների զարգացմանն ուղղված ներդրման համար՝ մաղթելով հաջողություններ հետագա գործունեության մեջ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Հայաստանի եւ Բրազիլի միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերություններին եւ միջպետական փոխգործակցության զարգացման հեռանկարներին:

Քննարկվել են նաեւ երկկողմ տնտեսական համագործակցության ընդլայնման հնարավորությունները, ինչպես նաեւ տարածաշրջանային մի շարք հարցեր:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԸՆՏՐՎԵՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

ՀՀ ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը Լիանա Մանուկյանի նախագահությամբ սեպտեմբերի 9-ին գումարել է անդրանիկ նիստը:

Օրակարգը հաստատելուց հետո քննարկվել եւ հաստատվել է հանձնաժողովի աշխատակարգը:

Լիանա Մանուկյանը տեղեկացրել է, որ ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնում առաջադրել է Ծովինար Վարդանյանի թեկնածությունը: Պատգամավոր Արուսյակ Մանավազյանը ներկայացրել է թեկնածուի կենսագրությունն ու աշխատանքային գործունեությունը:

ՀՀ ԱԺ «Ուժեղ Հայաստան» եւ «Հայաստան» խմբակցությունների ներկայացուցիչները տեղեկացրել են, որ «դեմ» են քվեարկելու Ծովինար Վարդանյանի թեկնածությանը:

Քվեարկության արդյունքում Ծովինար Վարդանյանն ընտրվել է հանձնաժողովի նախագահի տեղակալ:

Հանձնաժողովի անդամների կողմից քննարկվել եւ հաստատվել է քաղաքացիների ընդունելությունների ժամանակացույցը:

50 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Լեհաստանը Ուկրաինային կտրամադրի 50 միլիոն եվրո արժողությամբ ռազմական օգնության փաթեթ, որն իր մեջ ներառում է հակաօդային պաշտպանության համակարգեր: Այդ մասին հայտարարել է պաշտպանության փոխնախարար Պավել Ջալեւսկին, նշելով, որ օգնությունը հաջորդում է սեպտեմբերի 8-ին կայացած «Ռամշտայն»-ի հանդիպմանը: Մոսկվան այդ մատակարարումները դիտարկում է որպես հակամարտության երկարաձգում, իսկ Կիեւը պնդում է արեւմտյան աջակցության ավելացման անհրաժեշտության վրա, գրում է Լուրեր.com-ը:

Լեհաստանը Ուկրաինային կտրամադրի 50 միլիոն եվրոյի ռազմական օգնության փաթեթ, որը կներառի նաեւ հակաօդային պաշտպանության համակարգեր: «Պոլսատ» հեռուստաընկերությանը հայտարարել է պաշտպանության փոխնախարար Պավել Ջալեւսկին: «Լեհաստանը Ուկրաինային կտրամադրի 50 միլիոն եվրո՝ օգնության փաթեթի շրջանակներում», - հայտարարել է Ջալեւսկին: Նա մանրամասնել է, որ տրանշը կներառի հակաօդային պաշտպանության համակարգեր:

Ուկրաինայի պաշտպանության նախարարությունը սեպտեմբերի 8-ին «Ռամշտայն»-ի վերջին հանդիպումից հետո հայտարարել է արեւմտյան երկրներից ռազմական օգնության նոր տրանշերի մասին:

Կիեւը մշտապես պնդում է Արեւմտյան ռազմական օգնության մատակարարումների ավելացման վրա: Մոսկվան բազմիցս ընդգծել է, որ Կիեւին արեւմտյան զենքի մատակարարումները եւ ուկրաինական զորքերի մարզման հարցում օգնությունը միայն երկարաձգում են հակամարտությունը եւ չեն փոխում մարտադաշտում իրավիճակը:

ՀԱՅՏՆԻ Է ԿԱՔՄԸ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՏ ՄԵԿՆԵԼ ՖՐԱՆՍԻԱ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 9-10-ը աշխատանքային այցով մեկնել է Ֆրանսիայի Հանրապետություն՝ Փարիզ: ՀՀ վարչապետի N 891-Ա որոշմամբ հաստատվել է Ֆրանսիա մեկնող կառավարական պատվիրակության կազմը, ինչպես նաեւ գործուղման հետ կապված ծախսերի ֆինանսավորման աղբյուրները:

Որոշման համաձայն՝ Ֆրանսիա են մեկնել Նիկոլ Փաշինյանը, Մելանյա Հարությունյանը, Կարեն Գասպարյանը, Արմեն Խաչատրյանը, Սիրուն Հովսեփյանը, Ալեքսանդր Աբրահամյանը, Արման Շահինյանը, Տիգրան Մեհրաբյանը եւ Գեւորգ Գալստյանը:

Պատվիրակության կազմում ընդգրկվել է նաեւ Ֆրանսիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Խաչատրյանը: Միաժամանակ որոշմամբ գործուղման հետ կապված ծախսեր են նախատեսվել նաեւ ՀՀ արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարար Արարատ Միրզոյանի, Գագիկ Վանոյանի, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանի եւ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության եւ արհեստական բանականության նախարար Գեւորգ Մանթաշյանի համար:

Որոշման համաձայն՝ Անահիտ Ավետիսյանի համար նախատեսվում է ճանապարհածախս, իսկ վերոնշյալ պատվիրակության անդամների եւ Անահիտ Ավետիսյանի համար՝նաեւ գիշերավարձի ծախսեր:

Նիկոլ Փաշինյանի, Մելանյա Հարությունյանի, Կարեն Գասպարյանի, Արմեն Խաչատրյանի, Սիրուն Հովսեփյանի, Ալեքսանդր Աբրահամյանի, Արման Շահինյանի, Տիգրան Մեհրաբյանի եւ Գեւորգ Գալստյանի ճանապարհածախսն ու օրապահիկի ծախսերը, ինչպես նաեւ Անահիտ Ավետիսյանի ճանապարհածախսը, հուշանվերների ձեռքբերման եւ թարգմանչական ծառայությունների հետ կապված ծախսերը նախատեսվում է իրականացնել ՀՀ վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերի համար նախատեսված միջոցների հաշվին:

Նույն անձանց եւ Անահիտ Ավետիսյանի գիշերավարձի, ինչպես նաեւ պատվիրակության ներկայացուցչական եւ փոխադրամիջոցների վարձակալության ծախսերը կկատարվեն ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության միջոցների հաշվին:

Արարատ Միրզոյանի գործուղման ծախսերը կկատարվեն ՀՀ արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարարության միջոցների հաշվին, իսկ Գագիկ Վանոյանինը՝նույն նախարարության պետական արարողակարգի ծառայության միջոցների հաշվին:

Դավիթ Խուդաթյանի գործուղման ծախսերը նախատեսվում է իրականացնել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության, իսկ Գեւորգ Մանթաշյանինը՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության եւ արհեստական բանականության նախարարության միջոցների հաշվին:

Որոշման համաձայն՝գործուղման ընթացքում ՀՀ վարչապետի պարտականությունները կատարելու է ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը:

Որոշումն ստորագրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

45 ՀԱԶԱՐԱԿԱՆ ԴՈԼԱՐ՝ ՆՎԵՐ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Սպիտակ տան իր երեք կին աշխատակիցների յուրաքանչյուրին 45 հազար դոլարի կանխիկ նվեր է տվել: Այդ մասին տեղեկանում ենք Սպիտակ տան կողմից հրապարակված պաշտոնյաների ֆինանսական հայտարարագրերից:

Թրամփի գործադիր օգնական Նատալի Հարպը, Օվալաձեւ գրասենյակի աշխատանքների փոխտնօրեն Չեմբերլեյն Հարիսը եւ նախագահի հաղորդակցության հարցերով խորհրդական Մարգո Մարտինը իրենց տարեկան ֆինանսական հայտարարագրերում այդ գումարները ներկայացրել են որպես «տոների կապակցությամբ կանխիկ նվեր»:

Հատկանշական է, որ երեք աշխատակիցներն էլ տարեկան ստանում են 150 հազար դոլար աշխատավարձ: Այսինքն՝ Թրամփի կողմից նրանցից յուրաքանչյուրին տրված 45 հազար դոլարը կազմում է նրանց տարեկան աշխատավարձի մոտ 30 տոկոսը:

Սպիտակ տան մամուլի ծառայությունը հայտարարել է, որ Թրամփը երկար տարիների սովորություն ունի Սուրբ Ծննդյան տոներին նվերներ տալ իր շրջապատի մարդկանց, այդ թվում՝ երբեմն նաեւ աշխատակիցներին ու օգնականներին:

Սպիտակ տնից նաեւ պնդել են, որ այդ նվերները կապված չեն աշխատակիցների պաշտոնական պարտականությունների հետ եւ, հետեւաբար, թույլատրելի են համապատասխան իրավական եւ էթիկական չափանիշների շրջանակում:

Նատալի Հարպի շուրջ ուշադրությունը վերջին շաբաթներին հատկապես մեծացել է: 35-ամյա Հարպը Թրամփի թիմում աշխատում է 2022 թվականից եւ հաճախ է նրա թելադրանքով մուտքագրում նախագահի Truth Social-ի հրապարակումները: Թրամփի շրջապատում նրան նույնիսկ անվանել են «մարդատպիչ»՝ նախագահի համար դրական հրապարակումներ, սոցիալական ցանցերի գրառումներ եւ այլ նյութեր մշտապես պատրաստելու պատճառով:

Հարպը նաեւ Թրամփի հետ մի շարք ուղեւորությունների է մասնակցել, ինչն էլ վերջին շրջանում դարձել է հանրային քննարկումների թեմա:

Միեւնույն ժամանակ, Թրամփի երկարամյա օգնական Ուոլթ Նաուտան նույնպես նախագահի կողմից ստացել է տոնական նվեր, սակայն նրա դեպքում գումարը կազմել է 20 հազար դոլար:

Այսպիսով, միայն այս չորս օգնականներին Թրամփի տված կանխիկ տոնական նվերների ընդհանուր արժեքը կազմել է 155 հազար դոլար:

Ա. Վ.

ԼՅԱՆԱՎ ԿԿՈՐՑՆԻ

ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն Կոլումբիա այցի ժամանակ անդրադարձել է Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ հակամարտությանը՝ նշելով, որ ԱՄՆ-ն Իրանի հարձակումներին կպատասխանի՝ խորտակելով իրանական լցանավերը: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ լրագրողների հետ նրա զրույցի տեսանյութը տարածել է News24 ալիքը:

«Իրանը շարունակում է փորձել հարվածել ԱՄՆ ռազմածովային ուժերի նավերի, եւ ամեն անգամ, երբ նրանք անում են դա կամ փորձում են դա անել, նրանք կկորցնեն լցանավեր: Կարծում եմ՝ դուք դա այսօր կրկին կտեսնեք», - ասել է նա:

Այս հայտարարության ֆոնին Իրանը եւ ԱՄՆ-ն նոր հարվածներ են փոխանակել: Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը հայտարարել է, որ բալիստիկ հրթիռներ է արձակել Հորդանանում գտնվող ամերիկյան ռազմաբազայի ուղղությամբ, ինչպես նաեւ 10 նավ է թիրախավորել: ԱՄՆ-ն էլ հայտարարել է, որ խորտակել է իրանական հինգ նավթատար լցանավ:

ԻՆՉ ԵՆ ԱՌԱՋԱՐԿԵԼ

ԻՆՉ ԵՆ ԽՈՍՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Վիգեն Քոչարյանը պատահական չի լքել դատական համակարգը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նրան նոր աշխատանքային առաջարկ են արել, եւ դա է պատճառը, որ նա լքեց Վճռաբեկ դատարանի դատավորի պաշտոնը:

Մեզ հետ զրույցում Վիգեն Քոչարյանը հաստատեց տեղեկությունը, սակայն չցանկացավ բացահայտել, թե այդ ինչ նոր աշխատանքային առաջարկ է ստացել, որ լքում է դատավորի պաշտոնը:

Ի դեպ, դատական համակարգում այլ խոսակցություններ են: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Վիգեն Քոչարյանը, 2 տարի լինելով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր, որեւէ որոշում չի կայացրել, ուստի չի բացառվում, որ այս հանգամանքից դրդված՝ որոշել է լքել դատական համակարգը:

Հիշեցնենք, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորի լիազորությունները դադարում են, եթե նա հրաժարական է ներկայացնում:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով դատավորի լիազորությունները դադարում են այդ հարցի համար հրավիրված Բարձրագույն դատական խորհրդի նիստում դատավորի կողմից իր հրաժարականը պնդելու կամ այդ նիստին դատավորի չներկայանալու օրվանից:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 6-րդ կետերով նախատեսված հիմքերով դատավորի լիազորությունները դադարելու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահն անհապաղ հայտարարություն է տարածում դատական իշխանության պաշտոնական կայքում:

Ելնելով վերոգրյալից՝ հայտարարվում է, որ Բարձրագույն դատական խորհրդի 2026 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ ԲԴԽ-77-0-74 որոշմամբ՝ 2026թ. սեպտեմբերի 7-ից Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի կողմից ներկայացված հրաժարականի դիմումի հիման վրա վերջինիս լիազորությունները դադարել են: Վիգեն Քոչարյանը 2024 թվականին է նշանակվել Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՀԱԾՎԵՀԱՐԴԱՐ

Հուլիսի 16-ին՝ ժամը 20.55-ին, ահազանգ էր ստացվել «Վանաձոր» բժշկական կենտրոնից. Հոբարձի գյուղից հրազենային վնասվածքներով բուժօգնության էր տեղափոխվել Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի 30-ամյա մի բնակիչ:

Ոստիկանները պարզել էին, որ դեպքը տեղի է ունեցել Հոբարձի գյուղի մի հյուրատան մոտ, որտեղ հայտնաբերվել էին պարկուճներ, գնդակ ու փամփուշտներ: Ստեփանավանի քննչական բաժնում նախաձեռնվել էր քրեական վարույթ՝ սպանության փորձի, խուլիգանության, մարդուն առեւանգելու եւ ապօրինի կերպով հրազեն կրելու հատկանիշներով:

Հանցագործության բացահայտումը համագործակցված աշխատանքի արդյունք էր: Քրեական ոստիկանության Լոռու եւ Կոտայքի մարզային վարչությունների, Համայնքային ոստիկանության Ստեփանավանի բաժնի եւ Ստեփանավանի քննչական բաժնի ծառայողների լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում պարզվել է, որ մինչ այս դեպքը Ջրվեժում տեղի ունեցած վեճի ընթացքում 30-ամյա տղամարդը ծեծի էր ենթարկել համագյուղացուն, որն էլ, հաշվեհարդար տեսնելու նպատակով, ընկերոջ հետ կազմակերպել էր նրա սպանությունը:

Տեղեկանալով, որ նա գտնվում է Հոբարձի գյուղի հյուրատանը, հուլիսի 16-ին ընկերները վարձել էին «Նիսան» մակնիշի մեքենա ու զինված մեկնել հյուրատուն: Այստեղ միայն 30-ամյա տղամարդու ընկերն էր, որին բռնությամբ նստեցրել էին մեքենան ու տեղափոխել այլ վայր: Հյուրատան մոտակայքում հանդիպել էր 30-ամյա տղամարդը, եւ սկսվել էր փոխհրաձգություն, որի ընթացքում էլ ստացած հրազենային վնասվածքներով տուժածը տեղափոխվել էր «Վանաձոր» բժշկական կենտրոն: Սրանով, սակայն, խնդիրը չէր լուծվել: Այս անգամ 30-ամյա տուժածի 35-ամյա աբովյանցի ընկերն էր փորձել վրեժ լուծել, ինչը իրավապահներին հաջողվեց կանխել:

Քրեական վարույթի շրջանակում կատարված խուզարկություններով եւ այլ քննչական գործողություններով հայտնաբերվել ու առգրավվել է «Մակարով» տեսակի մարտական ատրճանակ:

Հանցագործության մասնակից անձանց մի մասը հայտնաբերվել, ձերբակալվել ու ներկայացվել է նախաքննական մարմին: Ձեռնարկվում են միջոցներ՝ մյուսներին հայտնաբերելու ուղղությամբ: Նախաքննությունը շարունակվում է:

ԻՆՉ Է ԱՐԵԼ ԶԻՆՎԱԾ ՏՂԱՄԱՐԴԸ

Սեպտեմբերի 4-ին Համայնքային ոստիկանության Կենտրոնական բաժնում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Արշակունյաց պողոտայի թաղամասերից մեկում 33-ամյա տղամարդը վիճաբանել է մեկ այլ անձի հետ: Միջադեպի վերաբերյալ ՆԳՆ ոստիկանությունում որեւէ ահազանգ չէր ստացվել:

Վիճաբանության ընթացքում 33-ամյա տղամարդը, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով եւ կոպտորեն խախտելով հասարակական կարգը, բարձրաձայն հայհոյանքներ է հնչեցրել, ապա, իր առավելությունն ընդգծելու նպատակով, «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի բեռնախցիկից վերցրել է հրազենի նմանվող առարկա եւ, շարունակելով հայհոյանքներ հնչեցնել հետապնդել է նշված անձին:

Համայնքային ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում տղամարդը ներկայացել է ոստիկանություն:

Խուլիգանություն կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով նա ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերով ներկայացվել է քննչական բաժին:

Կատարվում է նախաքննություն:

ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում քննված քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Հ.Ս.-ն թիվ 15/48 ընտրական տեղամասում ՀՀ Ազգային Ժողովի հերթական ընտրություններին մասնակցելիս, իր նախընտրած՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկը բացահայտ եւ այլ անձանց համար տեսանելի եղանակով ցուցադրել է նույն ընտրական տեղամասում ներկա անձանց, որից հետո վերոհիշյալ քվեաթերթիկը գցել է քվեատուփի մեջ:

Հ.Ս.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով (քվեարկության գաղտնիությունը խախտելը):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՄԵՂԱԴՐԱՆՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արծվիկ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, նշանակված լինելով Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի «Արեւիկ» արվեստի դպրոցում գտնվող թիվ 35/65 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ, ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունների՝ 2026թ.-ի հունիսի 7-ին կայացած քվեարկության օրը պարտավոր լինելով տվյալ տեղամասում ժամը 20:00-ին հայտարարել քվեարկության ավարտի մասին եւ արգելել ընտրողների մուտքը քվեարկության սենյակ, չի կատարել իր այդ լիազորությունները:

Արդյունքում, ժամը 20:00-ից հետո թույլատրելով ընտրողների մուտքը թիվ 35/65 ընտրական տեղամասի քվեարկության սենյակ՝ քվեարկությունը շարունակվել է մինչեւ ժամը 23:11-ը, այդ ժամանակահատվածում թույլատրելով մասնակցել եւս 277 ընտրողի, ինչի հետեւանքով կատարված գործողությունները էապես ազդել են քվեարկության արդյունքների վրա, եւ հնարավոր չի եղել պարզել քվեարկության իրական արդյունքները:

Արծվիկ Սարգսյանի կողմից իր լիազորությունները չկատարելու եւ ոչ պատշաճ կատարելու արդյունքում անհնարին է դարձել թիվ 35/65 տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների անփոփումը,ինչի արդյունքում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ թիվ 35 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026թ.-ի հունիսի 11-ի թիվ 10-Ա որոշումը վերանայելու մասին» 2026թ.-ի հունիսի 11-ի թիվ 254-Ա որոշմամբ թիվ 35/65 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները ճանաչել է անվավեր: Վերջինիս նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Ք. Մ.

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Սեպտեմբերի 7-ին ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է ստացվել, որ Անդրանիկի փողոցի առեւտրի կենտրոններից մեկում գործող տարադրամի փոխանակման կետում քաղաքացին փորձել է փոխանակել 100 դոլար անվանական արժեքով կեղծ թղթադրամներ:

Ահազանգով մեկնած Համայնքային ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները պարզել են, որ նշված կետի աշխատակիցը փոխանակման նպատակով քաղաքացուց ստացել է 3000 դոլար, սակայն ստուգմամբ պարզվել է, որ նրա տված 100-դոլարանոցներից 9-ը կեղծ են:

Կեղծ թղթադրամներ ձեռք բերելու եւ իրացնելու հիմնավոր կասկածանքով Մասիս քաղաքի բնակիչ 68-ամյա տղամարդը ձերբակալվել եւ իր վարած «Նիսան» մակնիշի մեքենայով հանդերձ՝ տարվել է Մալաթիայի բաժին:

Մեքենան տեղափոխվել է բաժնի հատուկ պահպանվող տարածք: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

● *Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են տեխնիկական զննություն չանցած 91 մեքենա:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՐԴԵՆ ՔԱՆԴՎԵԼ Է

Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքը օգոստոսի 15-ին հայտնել է ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանի Տավուշ այցի մասին. «Նախարարը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի, Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամի ղեկավար կազմի հետ շրջել է մարզի համայնքներում եւ ծանոթացել պետական բյուջեի, ինչպես նաեւ սուբվենցիոն ծրագրով իրականացվող շինարարական աշխատանքներին: Նախ դիտարկել է Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի ասֆալտապատման եւ մայթերի հիմնանորոգման աշխատանքները...»: Դիլիջանի Գետափնյա փողոցի եւ մայթերի հիմնանորոգման ծրագրի ավարտը հետաձգվել է մինչեւ 2027թ. հունիսի 30-ը: Շուրջ 1 միլիարդ դրամ արժեքով սուբվենցիոն ծրագրի աշխատանքները նախագծից մեծ շեղումներով են արվել: Աղստեւ գետի հունը մաքրելու, այնտեղից մեծ քանակությամբ ավազ հանելու հետեւանքով Գետափնյա փողոցի հենապատի հիմքը բացվել, հենապատի մի մասը քանդվել է, այն նորոգել են՝ խաթարելով հենապատի ընդհանուր տեսքը: Մեծ հատվածում մայթի սալիկապատված հատվածը քանդվել է, քանդված տեղում երեւում է, որ պոկված սալիկների տակ ցեմենտ չի աղել, այլ ավազ: Նախարար Խուդաթյանը, մարզպետ Հ. Ղալումյանը տեսե՞լ են հիմնանորոգված Գետափնյա փողոցի մայթի քանդված հատվածը: Նախարար Դավիթ Խուդաթյանի, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի Դիլիջան այդ այցից անցել է գրեթե մեկ ամիս: Սակայն Գետափնյա փողոցի հենապատված քանդված հատվածը, մայթի քանդված մասը չեն վերականգնել: Այդ սուբվենցիոն ծրագրի ավարտը հետաձգել են մինչեւ 2027թ. հունիսի 30-ը, ուրեմն մինչեւ հաջորդ ամառ հենապատի քանդված հատվածը եւ քանդված մայթը կարող են չնորոգել:

ՔԻՉ ԵՆ ՑԱՆՈՒՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել եմ՝ այս տարի Տավուշի մարզում քանի՞ հեկտար ցորենի եւ գարու արտ է հնձվել, որքա՞ն է եղել միջին բերքատվությունը: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «2026 թ. ՀՀ Տավուշի մարզում հնձվել է 1950 հա ցորենի եւ գարու արտ: Միջին բերքատվությունը 1հա-18-20գ»: Չնայած գործում է աշնանացան ցորենի մշակությանը պետական աջակցության ծրագիր, սակայն դրա արդյունքում ցորենի հեկտարները չեն ավելանում: 2010թ. սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին Տավուշի մարզպետի հաշվետվության մեջ նշված է, որ 2009թ.-ին Տավուշի մարզում կատարվել է 5534 հեկտար աշնանացան: 16 տարում ցորենի արտերը նվազել են գրեթե 3 անգամ, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ այս տարի հնձված 1950 հեկտար արտերի մեջ նաեւ գարու ցանքերն են ներառված: Ցորենի արտերը չեն ոռոգվում, պարարտանյութերով չեն պարարտացվում, վնասատուների եւ հիվանդությունների դեմ քիմիական եղանակով բուժում չի իրականացվում: Արտերի մեջ շատ են մկնանման կրծողները, որոնց դեմ թունավոր նյութերով պայքար չի իրականացվում: Այդ պատճառով էլ բերքատվությունը ցածր է, ցորեն ցանելը՝ ոչ եկամտաբեր:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՒՆԵՑՎԱԾՔ

Ի՞ՆՉ ՈՒՆԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել պատշոնաստար անձանց գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի վերաբերյալ հայտարարագրերը եւ դրանք ներկայացնել հանրությանը: Այս անգամ ուսումնասիրել ենք Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանի ունեցվածքը:

Խաչատուր Անդրեասյանը Մեղրի համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնում է 2024 թվականի մայիսի 30-ից:

Հայտարարագրի համաձայն՝ 2025 թվականի ընթացքում Անդրեասյանի եկամուտը կազմել է 5 մլն 270 հազար 500 դրամ: Ամբողջ գումարը ստացվել է աշխատանքի վարձատրության եւ դրան հավասարեցված այլ վճարումների տեսքով՝ Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմից:

Ինչ վերաբերում է անշարժ գույքին, ապա տարեվերջին Խաչատուր Անդրեասյանի անունով առկա է եղել 3 միավոր անշարժ գույք: Դրանցից երկուսը «հողին ամրակայված այլ անշարժ գույք» են, իսկ մեկը՝ բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածք: Բոլոր երեք գույքերը նրա սեփականությունն են՝ ձեռք բերված համապատասխանաբար 2005 եւ 2007 թվականներին: 2025 թվականին նոր անշարժ գույք չի ձեռք բերել եւ առկա գույքից որեւէ մեկը չի օտարել:

Տրանսպորտային միջոց Անդրեասյանը հայտարարագրում չի նշել: Նրա բանկային հաշվի մնացորդը տարվա սկզբում կազմել է 500 հազար դրամ, իսկ տարեվերջին՝ 700 հազար դրամ: Միաժամանակ, հայտարարագրել է նաեւ կանխիկ դրամ՝ տարվա սկզբի 360 հազար դրամի փոխարեն տարեվերջին ունենալով 400 հազար դրամ:

Ուշագրավ է նաեւ համայնքապետի բիզնես մասնակցությունը: Խաչատուր Անդրեասյանը «Ենոք-Մարի» ընկերությունում ունի 100 տոկոս մասնակցություն, որը ձեռք է բերել 2001 թվականի հունիսի 22-ին: Բացի այդ, նա 50 տոկոս մասնակցություն ունի «Բարձրաշենի ալրաղաց» ընկերությունում. այդ մասնակցությունը ձեռք է բերել 2003 թվականի սեպտեմբերի 26-ին:

Հայտարարագրում նշված է նաեւ, որ Անդրեասյանի ընտանիքի անդամ Ենոք Անդրեասյանը «ՍԱԼՄԱՐ» ընկերության տնօրենն է:

Քաղաքական առումով Խաչատուր Անդրեասյանը հայտարարագրել է անդամակցություն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ որպես Մեղրիի տարածքային կառույցի խորհրդի նախագահ:

Այսպիսով, 2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Մեղրիի համայնքապետ Խաչատուր Անդրեասյանը տարվա ընթացքում ստացել է 5.27 մլն դրամ եկամուտ, տարեվերջին ունեցել է 3 միավոր անշարժ գույք, 700 հազար դրամ բանկային հաշիվների մնացորդ, 400 հազար դրամ կանխիկ գումար, ինչպես նաեւ երկու առեւտրային կազմակերպություններում՝ համապատասխանաբար 100 եւ 50 տոկոս մասնակցություն:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՒՂԵՐՁ՝ ԲԱՔՎԻ ԲԱՆՏԻՑ

Բաքվի բանտում գերեվարված Արցախի ԱԺ նախկին նախագահ Դավիթ Իշխանյանը ՀՀ ՄԻՊ Անահիտ Մանասյանին հրավիրել է Բաքու: Նա ձայնագրություն է հրապարակել:



«Ես ձեզ հիմա հրավիրում եմ Ադրբեջանի քրեակատարողական հիմնարկ՝ մեր հետ հանդիպման: Կարծում եմ ներկա քաղաքական հարաբերությունների շրջանակներում դա լրիվ տեղավորվում է եւ որեւէ բարդություն չպետք է լինի: Գաք եւ ծանոթանաք խաղաղության դատավարության դատապարտյալներին: Ադրբեջանի Հանրապետության ձեր գործընկերուհին էլ հավանաբար ձեզ կուղեկցի եւ դուք, ինչպես ասում են, առաջին ձեռքից կտեղեկանաք ամեն ինչի մասին: Սպասում ենք»,- ասել է նա:

«Հայաստանի Հանրապետության իշխանության պատկան մարմիններին ու պատասխանատուներին այս պահին ասելիքս հետեւյալն է: Պահանջեք եւ ստացեք, ինչպես ադրբեջանական մամուլն է ձեւակերպում, «ծագումով հայ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների» մեղադրական ակտ ու եզրակացություն կոչված փաստաթղթերը, դատավճիռները եւ ինքներդ քննարկեք՝ կա՞ն հայկական պետականությանն ու պետությանը, ինչպես նաեւ հայ ժողովրդի իրավունքներին ու պատվին անդրադարձող հարցեր:

Պարոնա՛յք պետական պատասխանատուներ, Ադրբեջանում գտնվող 19 անձինք Հայաստանի Հանրապետության անձնագիր կրող անհատներ են: Իմացա՛ծ եղեք, որ դա մեր անհատական պատվի խնդիրը չէ: Դա բոլորիս պատվի խնդիրն է. մի քիչ թասիբ ունեցեք եւ տե՛ր կանգնեք»:

● *Մարզերում օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ը պարեկները հայտնաբերել են տեխնիկական զննություն չանցած 809 մեքենա:*

ԼՈՒՐԵՐ

ՖԱՍԹ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵԼ ԵՆ

Ֆասթ Բանկի աջակցությամբ հիմնովին վերանորոգվել եւ արդիականացվել են եւս մեկ մշակութային կենտրոնի՝ Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի ենթակառուցվածքները: 1967 թվականին հիմնադրված Դրամատիկական թատրոնն սկսում է 58-րդ թատերաշրջանը նոր ու տպավորիչ առաջնախաղերով՝ այս անգամ հանդիսատեսին ընդունելով ավելի պատշաճ եւ հարմարավետ պայմաններում:

Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի տնօրեն Գրիգոր Խաչատրյանն ասել է. «Արվեստը պատվիրատու երեւույթ է եւ այն չի կարող լինել առանց մեկենասության: Մենք պետական ոչ առեւտրային կազմակերպություն ենք: Մանավանդ ենթակառուցվածքների հարցում մենք բոլորս գիտենք, թե դա ինչքան թանկ է այսօր: Ծախսերի չափ կա, որը պետական թատրոնը չի կարող իրեն այդքան արագ ու այդքան արդյունավետ թույլ տալ»:

Ֆասթ Բանկը հետեւողականորեն շարունակում է մշակութային վայրերին աջակցելու իր ծրագիրը: Բանկի նախաձեռնությամբ եւ ֆինանսավորմամբ շարունակաբար հիմնանորոգվում են Երեւանի եւ մարզերի մշակութային վայրերի ենթակառուցվածքները՝ արվեստագետների ու հանդիսատեսի համար ապահովելով պատշաճ եւ հարմարավետ պայմաններ:

Ֆասթ Բանկը շարունակաբար ընդլայնում է իր ծառայությունների շրջանակը՝ առաջարկելով 24/7 արագ, հարմարավետ եւ անվտանգ ֆինանսական լուծումներ Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

YANDEX-Ի ԳԵՐԱԿԱ ԴԻՐՔԸ

«Հայաստանի ակտիվ բնակչության մոտ 10 տոկոսն այսպես թե այնպես գումար է վաստակում մեր պլատֆորմների միջոցով»,- ասում է Yango Group-ի Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի տարածաշրջանային, ինչպես նաեւ Yandex Armenia-ի ղեկավար Արամ Մխիթարյանը:

«ՍիվիլՆեթ Բիզնես»-ի տաղավարում նա ներկայացնում է ընկերության գործունեությունը եւ շուկայում գերակա դիրք զբաղեցնելու պատասխանատվությունը: Զրույցի ընթացքում քննարկվում են նաեւ տաքսու վարորդների իրական եկամուտները, նոր հարկային կարգավորումների ներդրմանը, դինամիկ գնագոյացման թափանցիկությանն ու օգտատերերի անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող խնդիրները: (Գ)

Տեսանյութը՝ ArmLur.am կայքում

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ Գ

35-ԱՄՅԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ

Սեպտեմբերի 7-ին Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում Հայէկոնոմբանկը հոբելյանական միջոցառմամբ ամփոփեց իր 35-ամյա գործունեությունը՝ վերահաստատելով իր հանձնառությունը՝ ակտիվորեն խթանել Հայաստանի կայուն տնտեսական զարգացումը եւ լինել հուսալի ֆինանսական գործընկեր իր հաճախորդների, բաժնետերերի եւ գործընկերների համար:

Երեկոյին ներկա էին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը, կառավարության, օրենսդիր մարմնի, ՀՀ Կենտրոնական բանկի եւ Հայաստանի բանկերի միության ղեկավարներ, ֆինանսական ոլորտի գործընկերներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Բանկի երկարամյա աշխատակիցներ, բաժնետերեր եւ հավատարիմ հաճախորդներ:

Միջոցառման ընթացքում ցուցադրվեց «Քայլ առ քայլ» տեսաֆիլմը, որը պատմում է Հայէկոնոմբանկի հիմնադրման եւ կայացման ճանապարհի մասին: Ներկայացվեցին Բանկի հիմնական ձեռքբերումներն ու նվաճումները՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության հարուստ փորձը, բարձր մասնագիտական որակավորում ունեցող թիմի առկայությունը, կորպորատիվ կառավարման մշակույթի ձեւավորումը ու բանկային շուկայում զբաղեցրած դիրքերը: Որպես կարեւոր ձեռքբերում՝ ընդգծվեց բանկի համբավն ու այն վստահությունը, որը հաճախորդներն ու գործընկերները տածում են Բանկի նկատմամբ:

35 տարիների ընթացքում Հայէկոնոմբանկի գրանցած արդյունքները տպավորիչ են.

Հաճախորդների անվերապահ վստահություն. Բանկի ծառայություններից օգտվող հաճախորդների քանակը հատել է 475,000-ի սահմանը:

Բաժնետերերի լայն բազա. լինելով բաց բաժնետիրական ընկերություն՝Հայէկոնոմբանկն այսօր համախմբում է ավելի քան 7,400 բաժնետերերի, եւ այդ թիվը շարունակաբար աճում է:

Ուժեղ եւ ընդլայնվող թիմ. Բանկի պրոֆեսիոնալ թիմն այսօր միավորում է ավելի քան 1,000 աշխատակիցների:

Հայէկոնոմբանկի խորհրդի նախագահ Սարիբեկ Սուքիասյանն իր ելույթում նշեց, որ Բանկն անցել է բարդ փուլերով՝ ապացուցելով իր կենսունակությունը, ճկունությունն ու անսասան հավատարմությունը սեփական արժեքներին. «Հայէկոնոմբանկի ճանապարհը սերտորեն կապված է Հայաստանի ֆինանսական համակարգի կայացման ու զարգացման պատմության հետ: Մեր որդեգրած ռազմավարության հիմքում եղել են թափանցիկ գործելաոճը եւ պետության հանդեպ պատասխանատվությունը:

35 տարի շարունակ մեր նպատակն է եղել ստեղծել բանկ, որը կլինի ոչ միայն ֆինանսական կայունության խորհրդանիշ, այլեւ ազգային տնտեսության աճի եւ վստահության հուսալի հենասյուն:

Եւ այս համատեքստում հպարտ եմ արձանագրել, որ մեր անմիջական ավանդն ենք ունեցել երկրի տնտեսական կայունության ապահովման գործում՝ տարեցտարի հաստատելով մեր դիրքերը՝ որպես խոշոր եւ օրինակելի հարկատու:

Արդեն 35 տարի Հայէկոնոմբանկն իր ուրույն տեղն ունի Հայաստանի բանկային համակարգում: Բանկի հաջողությունը չի չափվում միայն ֆինանսական ցուցանիշներով. այն չափվում է այն ազդեցությամբ, որը Բանկն ունենում է երկրի տնտեսական միջավայրում, եւ այն պատասխանատվությամբ, որը ձեւավորվում է տասնամյակների ազնիվ աշխատանքով»:

Հայէկոնոմբանկի Գործադիր տնօրեն Արտակ Առաքելյանը, շնորհակալություն հայտնելով Բանկի հաճախորդներին եւ գործընկերներին 35-ամյա ճանապարհը Հայէկոնոմբանկի հետ կիսելու համար, նշեց. «35 տարին պարզապես ժամանակահատված չէ: Դա հազարավոր մարդկանց հետ անցած ճանապարհ է՝ կարեւոր որոշումներ, հաղթահարված մարտահրավերներ եւ բազմաթիվ ձեռքբերումներ:

Մեր հաճախորդներից շատերը մեզ հետ են տասնամյակներ շարունակ. յուրաքանչյուր ձեռքբերված տուն, ընդլայնված բիզնես, ստեղծված աշխատատեղ կամ կրթություն ստացած ուսանող մեր համատեղ հաջողությունն է:

Մենք շնորհակալ ենք այս պարտավորեցնող վստահության համար եւ հպարտ ենք, որ մեր գործունեությամբ կարողացել ենք նպաստել նաեւ ձեռնարկատիրության առաջընթացին եւ ներդրումային միջավայրի ակտիվացմանը»:

Հոբելյանական երեկոն ուղեկցվում էր Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի՝ հայկական մոտիվներով համեմված կատարումներով եւ հանրահայտ ջազ երգչուհի Նինո Կատամաձեի ելույթով:

Միջոցառման ընթացքում խոսքով հանդես եկան ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Արմեն Նուրբեկյանը եւ Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյանը՝ ընդգծելով ֆինանսաբանկային համակարգի կարեւոր դերակատարումը երկրի տնտեսական կայունության ապահովման գործում:

Տեսաբացիկների միջոցով իրենց շնորհավորական ուղերձները հղեցին Բանկի միջազգային գործընկերները՝ շնորհակալություն հայտնելով երկարամյա վստահելի համագործակցության համար:

Միջոցառումն ամփոփվեց Նաիրա Գյուրջինյանի ղեկավարած «Կամերտոն» մանկական վոկալ ստուդիայի եւ Empyray խմբի մենակատար Սարգիս Մանուկյանի տպավորիչ կատարմամբ, որի ընթացքում հնչեց Հայէկոնոմբանկի հիմնը՝ նոր եւ ժամանակակից գործիքավորմամբ:

Վստահորեն քայլելով դեպի ապագա՝ Հայէկոնոմբանկի հանձնառությունն ու առաքելությունը մնում են անփոփոխ՝ լինել Հայաստանի կայուն տնտեսական զարգացումը խթանող հուսալի ֆինանսական կառույց եւ վստահելի գործընկեր իր հաճախորդների եւ բաժնետերերի համար:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՆՈՐ VISA STUDENT ՔԱՐՏ Գ

Քո ֆինանսները՝ քո ռիթմով. Հայէկոնոմբանկը ներկայացնում է իր նոր Visa Student քարտը:

Visa Student քարտն ուսանողներին առաջարկում է ֆինանսների կառավարման ճկուն լուծում՝ մեկ քարտում միավորելով առօրյա գործարքների համար անհրաժեշտ հիմնական առավելությունները:

Ուսանողական փաթեթի հիմնական առավելությունները.

Միջազգային քարտի տրամադրում. հարմար եւ անվտանգ վճարումներ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Արտոնյալ պայմաններով վարկային գիծ. ֆինանսական միջոցներ ուսման, անձնական ծրագրերի կամ այլ ծախսերի համար՝ հատուկ ուսանողների համար մշակված 16% տարեկան անվանական տոկոսադրույքով (փաստացի տոկոսադրույքը՝ 17.23%):

Հատուկ cashback-եր ուսանողների հաճախակի վճարումներից.

5% - քաղաքային եւ միջքաղաքային տրանսպորտից օգտվելիս,

2% - արագ սննդի կետերում (Fast Food) վճարումներ կատարելիս,

1% - սպորտային ակումբներ հաճախելիս:

Հայէկոնոմբանկի նոր Visa Student քարտն ամբողջական փաթեթ է՝ հարմարեցված ուսանողական կյանքի ռիթմին: Քարտը տրամադրվում է 5 տարի ժամկետով՝ միանվագ 1,000 դրամ վճարով՝ առանց տարեկան սպասարկման վճարի: Classic դասի այս քարտը հնարավորություն է տալիս ուսանողներին կատարել իրենց առաջին ֆինանսական քայլերը, մասնավորապես՝ քարտը բավական մատչելի պայմաններով վարկային գծի հնարավորություն է տալիս, ինչը շատ կարեւոր առավելություն է: Բացի այդ, քարտն ուսանողների նախասիրություններին հարմարեցված հատուկ քեշբեքեր է տալիս: Student քարտի առավելությունների շրջանակն առաջիկայում եւս շարունակելու է ընդլայնվել:

Պլանավորե՛ք, վճարե՛ք եւ խնայե՛ք Ձեր ֆինանսական ռիթմով՝ Հայէկոնոմբանկի Visa Student քարտով:

Քարտը հնարավոր է պատվիրել Հայէկոնոմբանկի մասնաճյուղերում՝ ներկայացնելով ուսանող լինելու փաստը հավաստող փաստաթուղթ:

Ծանոթացե՛ք քարտի մանրամասներին Հայէկոնոմբանկի պաշտոնական կայքէջում:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

ԿՆՇԻ ԱԼԲՈՄԻ 50-ԱՄՅԱԿԸ

Երաժշտության լեգենդ Սթիվի Ուանդերը հայտարարել է համաշխարհային շրջագայության մասին, որը նվիրված է նրա ամենահայտնի ստեղծագործություններից մեկի՝ «Songsin the Key of Life» ալբոմի թողարկման 50-ամյակին:



25-ակի «Գրեմմի» մրցանակակիր երգիչը շրջագայության մասին հայտնել է սեպտեմբերի 8-ին: Համերգային շարքը կմեկնարկի հոկտեմբերի 13-ին՝ Մեծ Բրիտանիայում եւ Եվրոպայում նախատեսված ելույթներով, որոնք կշարունակվեն մինչեւ նոյեմբերի 11-ը: Հատկանշական է, որ Ուանդերը յուրաքանչյուր համերգի ընթացքում նախատեսում է կատարել «Songs in the Key of Life» ալբոմն ամբողջությամբ՝ երկրպագուներին հնարավորություն տալով կենդանի կատարումներով վերապրել 1976 թվականի լեգենդար ձայնագրությունը:

ԱՄՆ-ում շրջագայությունը կմեկնարկի նոյեմբերի 19-ին՝ Նյու Յորքի MadisonSquare Garden-ում: Այնուհետեւ երաժիշտը ելույթներ կունենա նաեւ Չիկագոյում, Վաշինգտոնում եւ իր հայրենի Դետրոյթում: Շրջագայության եզրափակիչ համերգը նախատեսված է դեկտեմբերի 19-ին՝ Լոս Անջելեսի Intuit Dome մարզահամերգային համալիրում:

Մեծ Բրիտանիայի եւ Եվրոպայի համերգների տոմսերի գործընկերային նախավաճառքը կմեկնարկի սեպտեմբերի 9-ին՝ տեղական ժամանակով ժամը 10:00-ին, իսկ ընդհանուր վաճառքը՝ սեպտեմբերի 11-ին՝ նույն ժամին: Հյուսիսային Ամերիկայի համերգների ընդհանուր վաճառքը, բացառությամբ Դետրոյթի, կմեկնարկի սեպտեմբերի 10-ին՝ տեղական ժամանակով ժամը 10:00-ին: Դետրոյթի համերգների տոմսերը վաճառքի կհանվեն սեպտեմբերի 15-ին: Լեգենդար ալբոմի կեսդարյա պատմությունը «Songs in the Key of Life»-ը թողարկվել է 1976 թվականիսեպտեմբերին եւ դարձել Սթիվի Ուանդերի 18-րդ ստուդիական ալբոմը: Այն Billboard 200 հիթ-շքերթում դեբյուտել է առաջին հորիզոնականում եւ հետագայում ստացել է RIAA-իկողմից ադամանդե հավաստագիր: Ալբոմը ներառում է Ուանդերի մի շարք հայտնի ստեղծագործություններ, այդ թվում՝ «IWish», «Isn't She Lovely», «Sir Duke»,«Another Star» եւ «As» երգերը:

1977 թվականի «Գրեմմի» մրցանակաբաշխության ժամանակ ալբոմը արժանացել է «Տարվա ալբոմ» մրցանակին, իսկ Ուանդերը՝ նաեւ «Լավագույն տղամարդ կատարող»-ի մրցանակին փոփ վոկալ կատարման համար: «I Wish» երգի համար նա ստացել է նաեւ «Լավագույն տղամարդ R&B» վոկալ կատարման մրցանակը: «Songs in the Key of Life»-ը հետագայում ընդգրկվել է «Գրեմմի» փառքի սրահում՝ 2002 թվականին, իսկ 2005-ին՝ ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի Ազգային ձայնագրությունների ռեգիստրում: 1995 թվականին Q Magazine-ին տված հարցազրույցում, ինչպես մեջբերում է RollingStone-ը, Ուանդերը խոստովանել էր, որ իր բոլոր ալբոմներից ամենաշատը հենց «Songsin the Key of Life»-ով է գոհ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹԻԿՆԻԶՅԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԵՑ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

Հունաստանի գավաթի խաղարկության 2026/27 մրցաշրջանի լիգայի փուլի երկրորդ տուրում «Օլիմպիակոսը» սեփական հարկի տակ ընդունել էր «Վոլոսին»:

Տանտերերը հաղթանակ տոնեցին՝ 3-2 հաշվով: Դուբլ ձեւակերպեց թիմի նորեկ, մեքսիկացի հարձակվող Գոնսալեսը, եւս մեկ գոլ, Գոնսալեսի փոխանցումից, իր ակտիվում գրանցեց մեկ այլ նորեկ Պուերտան: Հյուրերը խաղավերջում կարողացան երկու գնդակ հետ բերել:

Այս ամռանը հունական ակումբ տեղափոխված Հայաստանի ազգային հավաքականի պաշտպան Նաիր Թիկնիզյանը մեկնարկային րոպեներից մասնակցեց ամբողջ հանդիպմանը, գրում է armsport-ը:

Հիշեցնենք, որ Գավաթի նորացված ձեւաչափով լիգայի փուլի 16 թիմերը (որոնք նախապես բաշխված են եղել ըստ զամբյուղների) անցկացնում են 4-ական հանդիպում՝ յուրաքանչյուր զամբյուղից մեկական մրցակցի դեմ: Առաջին 4 հորիզոնականները զբաղեցրած թիմերը միանգամից դուրս են գալիս փլեյ-օֆֆ (քառորդ եզրափակիչ), իսկ 5-12-րդ տեղերը գրաված ակումբները կանցկացնեն լրացուցիչ փլեյ-օֆֆ հանդիպումներ՝ մյուս 4 ուղեգրերը որոշելու համար:

Այս հաղթանակից հետո «Օլիմպիակոսը» վաստակեց 6 միավոր եւ գլխավորում է Գավաթի լիգայի փուլի մրցաշարային աղյուսակը:

ՉԼ-Ի ԽԱՂՆ ԸՆԴՀԱՏՎԵԼ Է

Դորտմունդի «Բորուսիայի» կիսապաշտպան Կոնստանտինոս Կարեցասը հոսպիտալացվել է Չեմպիոնների լիգայի լիգայի փուլի առաջին տուրի՝ իսպանական «Վիլյառեալի» դեմ հանդիպման ժամանակ:

18-ամյա հույն ֆուտբոլիստի ինքնազգացողությունը կտրուկ վատացել է առաջին խաղակեսի միջնամասում: 23-րդ րոպեին, առանց մրցակցի հետ որեւէ բախման, Կարեցասը փոխանցում կատարելուց հետո նստել է խոտածածկին եւ նշան արել մրցավարին ու մարզչական շտաբին, որ բժշկական օգնության կարիք ունի:

Դաշտ մտած բժիշկները մի քանի րոպե առաջին օգնություն են ցուցաբերել ծանր շնչող ֆուտբոլիստին, ինչից հետո նրան պատգարակով դուրս են բերել խաղադաշտից: 27-րդ րոպեին նրան փոխարինել է Իթան Նվաներին:

Գերմանական ակումբի մամուլի ծառայությունը հայտնել է, որ փոխարինման պատճառն արյան շրջանառության հետ կապված խնդիրներն են եղել.

«Կոնստանտինոս Կարեցասը ստիպված էր լքել խաղադաշտը արյան շրջանառության խնդիրների պատճառով: Ստեղծված հանգամանքներում նա իրեն նորմալ է զգում եւ այժմ տեղափոխվում է հիվանդանոց՝ լրացուցիչ բուժզննում անցնելու նպատակով»:

Նման ախտանիշները հաճախ ուղեկցվում են գլխապտույտով, զարկերակային ճնշման անկմամբ եւ հոգնածությամբ, ինչի հետեւանքով ուղեղը բավարար քանակությամբ թթվածին չի ստանում:

Չնայած այս միջադեպին՝ Դորտմունդում կայացած հանդիպումն ավարտվել է տանտերերի հաղթանակով՝ 3:2 հաշվով:

Կոնստանտինոս Կարեցասը «Բորուսիա» է տեղափոխվել այս ամռանը՝ բելգիական «Գենկից»: Ըստ Transfermarkt-ի՝ գործարքի արժեքը կազմել է 30 միլիոն եվրո: Նոր ակումբի կազմում կիսապաշտպանն արդեն հասցրել էր անցկացնել 5 հանդիպում եւ աչքի ընկնել մեկ գոլային փոխանցմամբ, գրում է armsport-ը:

Չեմպիոնների լիգայի հաջորդ տուրում «Բորուսիան» հոկտեմբերի 14-ին արտագնա խաղում ուժերը կչափի «Բուդե-Գլիմտի» հետ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ԿԱՐՈՂ ԷՐ ՓՐԿԵԼ

Չեմպիոնների լիգայի հիմնական փուլի մեկնարկային տուրում Միլանի «Ինտերը» արտագնա խաղում 1:2 հաշվով զիջեց Մադրիդի «Ռեալին»: Չնայած պարտությանը՝ իտալական ակումբը բազմաթիվ գոլային պահեր ունեցավ, իսկ հանդիպման վերջնամասում մոտ էր հաշիվը հավասարեցնելուն:

Հայ կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը խաղադաշտ դուրս եկավ 82-րդ րոպեին՝ փոխարինելով Կառլոս Աուգուստոյին: «Ինտերի» գլխավոր մարզիչ Կրիստիան Կիվուն որոշել էր վճռորոշ հատվածում վստահել հայ ֆուտբոլիստի փորձին, եւ Մխիթարյանը կարճ ժամանակահատվածում հասցրեց սրել խաղը: Հանդիպման վերջնամասում նրա վտանգավոր հեռահար հարվածից հետո Տիբո Կուրտուան հետ մղեց գնդակը, իսկ վրա հասած Լաուտարո Մարտինեսը չկարողացավ եզրափակել գրոհը:

Այս դրվագն աննկատ չի մնացել իտալական առաջատար պարբերականների կողմից, փոխանցում է armsport-ը:

La Gazzetta dello Sport: Հեղինակավոր պարբերականն այս դրվագն առանձնացրել է որպես միլանյան թիմի ամենավտանգավոր գրոհներից մեկը՝ ընդգծելով, որ Մխիթարյանի հարվածից հետո Կուրտուան ստիպված էր փրկել իր թիմին:

Sky Sport Italia: Լրատվամիջոցը հայ կիսապաշտպանի մոտ տասը րոպեանոց մասնակցությունը գնահատել է բավարար՝ տալով 6/10 վարկանիշը:

FCInterNews: Մասնագիտացված կայքը Մխիթարյանի անվան դիմաց նշել է «SV» (senza voto՝ առանց գնահատականի), քանի որ հատկացված խաղաժամանակը չափազանց կարճ է եղել լիարժեք գնահատականի համար:

Ընդհանուր առմամբ, իտալական մամուլի ուշադրության կենտրոնում հենց Մխիթարյանի ստեղծած գոլային պահն է: Նշվում է, որ սահմանափակ խաղաժամանակի պայմաններում հայ ֆուտբոլիստը կարող էր դառնալ «Ինտերի» փրկիչը, եւ միայն Կուրտուայի վստահ խաղը թույլ չտվեց, որպեսզի հարվածը վերածվի փրկարար գոլի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Աննա Հարությունի Գրիգորյանի՝ Երեւանի Գլաձորի համալսարանի բանասիրության ֆակուլտետի «Հայոց լեզու եւ գրականություն» մասնագիտությամբ 2010 թվականին տրված դիպլոմը:

Դիպլոմ՝ AB №100808

Գրանցման համարը՝ 174

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Անի Գագիկի Թումանյանի՝ «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առեւտրային կազմակերպության կողմից 2009 թվականին տրված դիպլոմը:

Դիպլոմի համարը՝ AK № 071308

Գրանցման համարը՝ 11398:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում սեպտեմբերի 19-ին՝ ժամը 18:00-ին, կկայանա «Կարմեն» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞r իրավական ակտերով է ապահովվում քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման գործընթացը:

Հարություն Գասպարյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման գործընթացը եւ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների կիրարկումն ապահովվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հետեւյալ որոշումներով՝

1. ՀՀ Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին» N 2106-Ն որոշում:
2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի «Քաղաքաշինության գործունեության սուբյեկտների լիցենզիաների դասակարգման եւ պատասխանատու մասնագետների հավաստագրման անցումային կարգը հաստատելու մասին» N15-Ն հրաման:
3. ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող աշխատանքների եւ ծառայությունների ցանկը հաստատելու մասին» N1615-Ն որոշում:
4. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը եւ մասնակցությանը ներկայացվող պահանջները եւ շարունակական մասնագիտական զարգացման յուրաքանչյուր տեսակի գծով շնորհվող կրեդիտների քանակը եւ դրանց շնորհման չափորոշիչները հաստատելու մասին» N 06-Ն հրաման:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է Անհատական ուսուցման եւ զարգացման պլանը (ԱՈՒԶՊ), իսկ սովորողի համար՝ Անհատական ուսուցման պլանը (ԱՈՒՊ):

Գոհար Սարգսյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Անհատական ուսուցման եւ զարգացման պլանը երեխայի կարիքի եւ առանձնահատկությունների հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է երեխայի զարգացման, ուսուցման եւ դաստիարակության տարեկան նպատակները, խնդիրները եւ դրանց հասնելու գործողությունները (կարիքի դեպքում՝նաեւ աջակցող ծառայությունները) եւ ժամկետները՝երեխայի համար հասանելի դարձնելու համար նախադպրոցական կրթության պետական չափորոշչի եւ կրթական ծրագրերի սահմանված վերջնարդյունքները:

Անհատական ուսուցման պլանը հանրակրթության պետական եւ առարկայական չափորոշիչների, ծրագրերի եւ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները եւ դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝աջակցող ծառայությունները):

Հայաստանի մանկավարժահոգեբանական կենտրոն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝Գագիկ Շամշյանի

Ավտովթար՝ Գեղարքունիքի մարզում. Փոքր Մասրիկում բախվել են «ՎԱԶ 2121»-ը եւ «Volkswagen Tiguan»-ը. 5 վիրավորներից 4-ը անչափահասներ են:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 + 5 + 20 + 25
	Կոտայքի լեռներ	+ 1 + 5 + 20 + 23
	Կոտայքի նախալեռներ	+ 9 + 12 + 23 + 25
	Գեղարքունիք	+ 1 + 6 + 18 + 23
	Լոռի	+ 2 + 6 + 20 + 24
	Տավուշ	+ 3 + 7 + 21 + 24
	Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 + 20 + 23
	Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 12 + 23 + 27

	Արարատ	+ 10 + 13 + 24 + 28
	Արմավիր	+ 9 + 13 + 26 + 29
	Վայոց ձորի լեռներ	+ 2 + 6 + 20 + 23
	Վայոց ձորի նախալեռներ	+ 10 + 13 + 26 + 29
	Սյունիքի լեռներ	+ 2 + 5 + 15 + 19
	Սյունիքի նախալեռներ	+ 5 + 8 + 20 + 24
	Սյունիքի հովիտներ	+ 11 + 14 + 26 + 29
	Երեւան	+ 11 + 13 + 26 + 28

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **09.09.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*